

Դիւլորիէ՝ Դիւ Կանժի հետեւելով՝ Լեւոնի տապանաքարին վրայի արձանադրութիւնը նկատողութեան առնելէ զատ, անոր կտակին օրինակին մէջ ալ կը կարգայ հետեւեալը .

« Léon de Lusignan, quint roy latin du royaume d'Arménie, »
այսինքն՝ « Լեւոն Լուսինեան, հինգերորդ լատին արքայ Հայոց թագաւորութեան (1) : »

Հ. Ղ. Վ. Ալիշան թէեւ իր Յուշիկի հայրենեաց Հայոց գրքին մէջ (հտ. Բ, եր. 495) Լեւոնի տապանաքարին վրայի արձանադրութիւնն այսպէս կը կարգայ — « Լեւոն Լիզինեան, հինգերորդ արքայ Լատին թագաւորութեան Հայոց, » բայց Սիսուանի մէջ Լուսինեան տոհմէ երկու լատին թագաւոր միայն կընդունի, առանց խօսելու յիշեալ տապանադրի նրկատմամբ : Այս ուղիղ սրբադրութիւնն արդիւնք է անշուշտ Դարգելի ժամանակագրութեան յայտնութեան . վասն զի Դարգել, — որուն վրայօք պիտի խօսիմ ետքը, — Գուխտո՛նն ու Լեւոնը միայն ցոյց կուտայ իրրեւ Լուսինեան տոհմէ լատին թագաւորներ, Լեւոնի համար միշտ գրելով « Լեւոն Ե », իսկ միւսները հայկական սերնդէ կընդունիւ Բաղուշան եւս վերջերս հրատարակած Մի սեւուրիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ գրքին մէջ այս ուղղութեան կը հետեւի :

Հիմա քննենք տեսնենք թէ ի՞նչ բանէ յտաջ եկած է այս սխալը, եւ ի՞նչ արժէք ունին Ստեփաննոս Լուսինեանի, Դիւ Կանժի, Դիւլորիէի եւ ուրիշներու կարծիքները :

Այս հեղինակներէն ամենէն հինը, հետեւաբար ամենէն « վաւերականը », հ. Ստեփ. Լուսինեան պիտի ըլլայ . բայց հ. Ստեփաննոս իրեն մօտիկ ժամանակներու ղէպքերու մասին ա՛յն աստիճանի տգիտութիւն ցոյց կուտայ, որ մարդ ակամայ կտախլուի բոլոր գրածներն անվաւեր համարելու . օրինակի համար՝ նա կըսէ, թէ Լեւոն վերջին իր կտակը պատրաստած է 1396-ին, եւ մեռած՝ 1404-ին (2) . մինչդեռ յայտնի է, թէ Լեւոնի կտակին տակը գրուած է՝ 1392 թուականը, իսկ տապանաքարին վրայ գրուած մահուան թուականն է՝ 1393, համաձայն ժամանակակից պատմիչներու : — Հռչականունն արեւելագէտ Սէն-Մարտէն եւս վերջին Լեւոնի մասին ֆրանսական Կաճառին ներկայացնելով ուսումնասիրութիւն մը, որ

(1) Անդ, եր. 735, ծանօթ. 3 :

(2) Description եւալլն, քվ. 202 ա :